ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՆԸ ՍԱՆ-ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԵՋ

Այս երկրորդ տարին է, որ Սրբոց Թարգմանչաց տոնը ցուցահանդեսով, գրական և գեղարվեստական հայտագիրով և եկեղեցական արարողությամբ կկատարվի այստեղ Պատ. Հոգաբարձության նախաձեռնությամբ։

Հոկտ. 8-ին Հայոց Ս. Հովհաննես եկեղեցւոյ սրահը զարդարված էր տոնական շուքով։ Մասիսի մեծադիր նկարը խորքն էր բեմին։ Երկու կողմեն կախված էին Խաչատուրյանի, Խոլլիկյանի, Մախոխյանի, Ա. Մուրատյանի նկարներեն մեկ քանին, և Կոմիտաս Վարդապետի Յուղանկարը Գոռոզյանե, Պրուսայի Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցվո ամբողջությամբ ձեռագործ մեկ թանկագին վարագույրը և Ս. Կալուստյանի մորը ձեռքով զուտ մետաքսե հյուսված մեծարժեք մեկ գորգը։ Բեմին երկու կողմերը կիսաբոլոր սեղաններու վրա դասավորված էին հայուհիներու ձեռագործները։

Մասնավոր շահեկանություն կներկայացներ գիրքերու բաժինը, ուր կային 1604 թվականին գրված և ծաղկանկարված Նոր Կտակարան մը, մեր հնագույն տպագրության նմուշներեն Յիսուս Որդի, Սաղմոս և Տոնացույց։ Ուշագրավ էին մեր ծիսական մատյանները, հին մատենագիրներու, Աստվածաշունչի և անոնց հետ կապ ունեցող ինչինչ հրատարակությունները, Երուսաղեմի Համաբարբառը, երից վարդապետաց բառարանը, Սովետական Հայաստանի գիտական և բանասիրական մեծարժեք գործերը, պարբերական մամուլեն «Էջմիածին», «Սիոն», «Հասկ», «Հայաստանեայց Եկեղեցի» հանդեսները և այլն։

Հանդեսեն առաջ Տ. Զգոն Մ. Վարդապետ լուսաբանություններ տվավ ցուցադրված առարկաներու և գիրքերու մասին։

Գեղարվեստական բաժինը սկսավ ժամը 9-ին նախագահ հոր աղոթքովը։ Ատենապետն էր Տիար Ա. Պերպերպաշյան։ Տիկին Մ. Տորյան որ իբր դաշնակահար գնահատված է նաև օտարներե, իր նվագած մենապարով կայթելու փափագ արթնցուց շուրջ երկու հարյուր հանդիսականներուն մեջ։ Տիկին Պ. Ճիվարյան դերասանի շնորհքով արտասանեց Վ. Թեքեյանի «Տաղ Գրաբարին»։ Պողոսիկ Պողիկյան իր բարիթոն ձայնին ուժգնությամբ լեցուց հանդիսարանը»։

Գեր. Տ. Զգոն Մ. Վարդապետ նոր սերունդին համար խոսեցավ «Հայ մշակույթի ռահվիրաներն ու կարկառները» նյութով։

Ս. Ֆ.ի Սինֆրնի օրքեստրայի խումբը, տիար Ա. Միքայելյանը իր ջութակով մագնիսացուց ներկաները։ Սրդ. Ա. Էհրամճյան հաջող կերպով ընկերակցեցավ ե՛վ Պողոսիկին ե՛վ Միքայելյանին։ Ս. Տեր-Հարությունյան արտասանեց Ա. Տեր-Սարգիսյանի Էջմիածինը։ Տիկին Տայանա Մ. Սալայան մելանույշ քաղցրությամբ մեներգեց ժողովրդական երեք երգեր ընկերակցությամբ Տիկ. Տորյանի։

Դոկտ. Ա. Մալայան Հայ Մշակույթի մասին իր կատարած համապարփակ ատենախոսությամբ ցույց տվավ հայ ժողովուրդի կարևոր մուծումները գրականության և գիտության ասպարեզներուն մեջ։

Հանդիսականներեն շատերուն համար հայտնություն մը եղավ տաղանդավոր երաժիշտ երգահան Տիար Ա. Սևանյան, որ նոր ժամանած է Եվրոպայեն և իրեն հետ բերած է հայրենի հիշատակներով հարուստ իր Քանոնը։ Սևանյանի մոգական մատները Սպանդարյանի Ղայթարման և Կոմիտասի Կաքավիկը նվագած միջոցին թրթռացուցին սիրտերը բոլոր հանդիսականներուն, որոնց որոտընդոստ ծափերու պահանջքին ի վերջոյ գոհացում տվավ ան։ Սևանյանի առաջ բերած խանդավառության մեջ իր բաժինն ունեցավ դաշնակահար Տիկին Տորյանը։

Մեծ ոգևորության մեջ էր, որ նախագահ Հայր Սուրբը իր փակման խոսքն արտասանեց, անդրադառնալով հայ մշակույթի իմացական և զգալի իրագործումներուն, որոնց տպավորությունը թողուց նաև այս տոնակատարությունը։

Ժողովուրդը մինչև կես գիշեր մաս հետաքրքրությամբ մեղվի պես սեղանե սեղան, գիրքե գիրք, պատկերե պատկեր գնաց՝ ծծելու համար մեր մշակույթի ոստաքանց ծաղիկներուն բույրն ու թույրը։

Հոկտ. 10-ին, կիրակի, եկեղեցական հանդիսությամբ փառավորվեցավ Սրբոց Թարգմանչաց և անոնց հավերժական աշակերտներուն գործն ու հիշատակը։ Հովիվը քարոզեց «Աստվածաշունչի թարգմանությամբ ստեղծված հայկական վերածնունդը» նյութին մասին։ Տպավորիչ և հոգեպարար եղան օրվան արարողություններն ու պատգամը։

ԴՊԻՐ